«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխանողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Դաստիարակ՝ Նելլի Ղարիբյան

Մանկապարտեզ՝ «Մանչուկ » **ՀՈԱԿ**

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3-4

Գլուխ առաջին . Մանկավարժական աշխանողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:……5

1.1Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում……5-6

1.2Մանկապարտոզի դերը երեխայի զարգացման հարցում……7-9

Գլուխ երկրորդ. մեդիակրթական գործընթացում նախադպրոցականների կրթության եվ դաստիարակության առանձնահատկությունների փորձարարական հիմնավորումն ու արդյունքների վերլուծությունը՝ ընտանիք մանկապարտեզ համագործակցության ընթացքում:……10

2.1 Մեդիամիջավայրում նախադպրոցականների իմացական հետաքրքրությունների դերսևորման առանձնահատկությունները……10-11

2.2Փորձարարության ընտրանքն ու ընթացքի նկարագրությունը……12-13

2.3 Կարծիք ծնողներից……14

2.4 Կարծիք տնօրենից……15-17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……19

Ներածություն

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձնահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան քան դրանք մեր ունակություններով փոխարինել փորձելը:

Ժան Ժակ Ռուսո

Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը:

Բենջամին Սփոք

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝մանկապարտեզինը: Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում: Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխային ճիշտ զարգացմանը նպաստելը: Ճիշտ զարգացմանը նպաստում են նորօրյա մեթոդներն ու ծարագրերը, այսօր ՆՈՒՀ-ի առջև նոր խնդիր է դրված 9-ը կարողունակությունների ճիշտ և արդյունավետ ձևավորում, ինչպես նաև ուղղորդել ծնողին թվային և մեդիագրգիտության հարցում: Վաղ մանկության տարիքից երեխաների զինումը թվայն գրագիտությամբ ժամանակակից աշխարհի մարտահրավերն է, որն էլ փորձում ենք հաղթահարել միասին, կառուցելով՝ ապատեղեկատվությանը դիմակայուն հասարակություն:

Սույն հետազոտության նպատակն է հրմնավորել ծնող-մանկապարտեզ կապի արդյունավետությունը, առանձնահատկությունները,առավելությունները սանի կրթության,դաստիարակության և զարգացման գործում: Որոշել մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվի,ծնողի և սանի հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները,բացահայտել և վերլուծել մանկավարժական կոլեկտիվի,սաների և ծնողների համագործակցության աստիճանը՝դաստիարակչական խնդրների արդյունավետ լուծման համար: Սահմանել այն մեթոդներն ու ձևերը,որը կնպաստի մանկավարժական աշխատանքի

արդյունավետությանը, կարողունակությունների չապորոշչային վերջնարդյունքների իրականացմանը:

Երեխաները ժամանակակից աշխարհում գնալով ավելի ավելի շատ են օգտվում թվային մեդիայից, իջնում է մեդիասպառողների տարիքայի նշեմը, չնայած, որ մասնագետները, բժիշկները չեն խրախուսում էկրանների կիրառությունը շատ վաղ տարիքում՝ մատնանշելով դրա վտանգները՝ խոսքի և զարգացման հապաղում, ֆիզիկական պասիվութույն, քնի խանգարում։Միջազգային հետազոտությունները փաստում են, որ տեխնոլոգիան տանը հիմնականում օգտագործվում է երեխային զբաղեցնելու համար՝ պասիվ սպառման միջոցով։ Մյուս կողմից, դպրոց մանկապարտեզ բերելը դրական ազդեցություն է ունենում. Մանկապարտեզում երեխան մենակ չի մնում էկրանի առջև, չիլինում պասիվ սպառող, այստեղ մեդիան կիրառվում է երեխայի զարգացման այս կամ այն խնդիրը լուծելու համար, այդ կիրառությունը լինում է թիրախային, ակտիվ, մեծահասակի մասնակցթյամբ ուղղորդմամբ, սովորեցնում է երեխային մեդիահիգիենայի կանոնները, նաև նպատակաուղղված է մեդիայի ասելիքն ազդեցությունը հասկանալուն։

Այդ իսկ պատճառով հրավիրել եմ ծնողներին կլոր սեղանի շուջ քննարկելու ինչպես կազմակերպել մեր հետագա աշխատանքները: Մշակել եմ պլան, որը ներայացրել եմ ծնողներին թե ինչ ծրագրեր, մուլտֆիլմեր, տեսանյութեր, խաղեր կարող են դիտել երեխաները համացանցի միջոցով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Մանկավարժական աշխանողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օինանական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

1.1Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին , որոնք աճում են, ծավալվում են նրա հետ, կազմում նրա անքակտելի մասը»:

Վ.Հյուգո

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության ու վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ:

Մխիթար Գոշը (12-րդ դար) նշում էր, որ զավակների զանցանքների և հանցաքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարության, ազնվության և մարդասիրության սերմեր:

19-րդ դարի հայ գրողներն էլ (Խ. Աբովյանը, Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը,Ղ. Աղայանը, Մ. Նալբանդյանը) աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ տեղ էին տալիս ընտանիքին: Նրանք ընդգծում էին ընտանիքի վճռորոշ դերը՝ երեխայի ապագայի ճիշտ կազմակերպման, նրա հակումների անկաշկանդ զարգացման առումով:

Ծնվելու պահից երեխան հայտնվում է իր համար բոլորովին նոր մի միջավայրում, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեխայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից: Դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է նաև ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից: Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար:

Ընտանիքն ավելի լայն հնարավորություն ունի երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերով (կենցաղային, աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական- դաստիարակչական), քան մանկապարտեզը: Եթե մանկապարտեզում երեխային դեպքից դեպք է որևէ աշխատանք հանձնարարվում, ապա ընտանիքում բոլորովին այլ պատկեր է:

1,5-2 տարեկան երեխան կարող է մշտական պարտավորություններ ունենալ, ասենք՝ երեկոյան հավաքել խաղալիքները, հայրիկին հողաթափեր, պապիկին թերթ մատուցել և այլն: 3-4 տարեկան երեխային կարելի է վստահել ջրել սենյակային բույսերը, օգնել մեծերին և այլն:

«Երեխան ընտանիքի հայելին է» արտահայտությունը դիպուկ կերպով բնութագրում է երեխայի վերաբերմունքը այն հոգևոր և բարոյական սկզբունքների նկատմամբ, որոնք ընդունված են նրա ընտանիքում:

Յուրաքանչյուր ընտանիք ունի ճիշտ կամ սխալի, բարու և չարի, գթասրտության, «կարելիի» ու «չի կարելիի» իր պատկերացումները: Եթե երեխայի շրջապատում «թույլատրելի» է համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, ապա դժվար թե այդ երեխաները զերծ մնան դրանց ավերիչ ազդեցությունից: Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց «կենսական դասերին»՝ երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթը: Մեծ մանկավարժներն ընդգծում են, որ ընտանեկան դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է երեխայի զարգացման ու դաստիարա–կության գործին վաղ միջամտության դերը: Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ լիովին կատարում են իրենց դերը՝ համալիր բարենպաստ ներգործությունը: Պատճառները բազմազան են. որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները՝ չեն հասկանում դրա կարևորությունը:Բոլոր դեպքերում, նույնիսկ բարենպաստ և երեխայի զարգացմամբ զբաղվելու կարևորությունը

գիտակցող ընտանիքների համար զգացվում է նախադպրոցական հաստատությունների օգնության անհրաժեշտությունը, առնվազն հասակակիցների միջավայրի, նրանց և այլ մեծահասակների հետ սոցիալական շփման ապահովման տեսանկյունից, ինչը դժվար է ապահովել ժամանակակից ընտանիքներում, որտեղ հիմնականում մեկ կամ երկու երեխա է մեծանում։

1.2Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել, որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության։

Էլբերտ Հաբարդ

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է։ Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում. Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով։ Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը։ Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը։

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն։

Մանկապարտեզի ընտրության ժամանակ ծնողները պարտադիր պետք է ուշադրություն դարձնեն՝

Ինչպիսի՞ դաստիարակներ և դայակներ են զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ։

Ի՞նչ մեթոդով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը։

Արդյոք երեխան սիրում է դաստիարակին և դաստիարակի օգնականին։ Հաճույքո՞վ է հաճախում, թե՞ պարտադրված։

Արդյո՞ք երեխան ճնշման չի ենթարկվում հասակակիցների և մեծահասակների կողմից։

Որքանո՞վ են մանկապարտեզի պայմանները համապատասխանում սանիտարահիգենիկ պահանջներին։

Որքանո՞վ է մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում։

Յուրաքանչյուր երեխա ունի իր զարգացման տեմպը և ուրույն ոճը։

Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս։

Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը, մտածողությունը։

Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով։

Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը։

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող , երեխաներին խրախուսող խաղեր։

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց։ Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն։ Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է։ Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին։ Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը։ Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին։ Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ , ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին։

Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանկյունից.

Սոցիալական ազդեցություն

Մանկական հոգեբաների մեծ մասը միակարծիք են, և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն, ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնել լացով, ապա նոր միջավայրում նա ստիպված է համարվել և ուրիշ կարծիքը հաշվի առնել: Երեխայի էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ: Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներին, ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերներն իրական են: Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում են տարեդարձներ, կազմակերպվում են արշավներ, այցելում են թանգարաններ, թատրոններ: Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին:

Սահմանվում է հստակ օրակարգ. փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին: Ճիշտ սահմանած օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը , ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:

Հոգեբանական ազդեցություն

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա:

Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամբ մեծանալուն՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

Սոցիալական հմտությունները. նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ, (ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից):

- Թիմում աշխատելու հմտությունները,
- Ձեռք է բերում նոր գաղափարներ, մոտեցումներ,
- Ընդլայնում է աշխարհայացքը:

Մանկապարտեզ հաճախելն ունի նաև մի շարք այլ առավելություններ:

Կա հստակ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝ անհնար:

Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում։

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ մանկապարտեզից հետո երեխաներն ավելի արագ և հեշտ են հարմարվում դպրոցին։ Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած ուսումնական գիտելիքներն են (տառաճանաչություն կամ մաթեմատիկա), այլ կյանքի մի շարք հմտությունները, օրինակ՝ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության կենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն։

Գլուխ երկրորդ.

Մեդիակրթական գործընթացում նախադպրոցականների կրթության եվ դաստիարակության առանձնահատկությունների փորձարարական հիմնավորումն ու արդյունքների վերլուծությունը՝ ընտանիք մանկապարտեզ համագործակցության ընթացքում:

2.1.Մեդիամիջավայրում նախադպրոցականների իմացական հետաքրքրությունների դերսևորման առանձնահատկությունները

Այսօր մեդիա կրթությունը կարևորվում է գրեթե բոլոր ոլորտներում և նախադպրոցական մանկավարժությունը բացառություն չէ:

«Մեդիա» եզրույթը գալիս է լատիներեն «մեդիա» (միջոց) բառից: Այսօր նախադպրոցական տարիքի երեխաները շատ ակտիվ հետաքրքրված են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով, գրեթե բոլոր երեխաները տիրապետում են ժամանակակից գաջեթներին, համակարգիչներին, հեռախոսներին, օգտվում են համացանցից։ Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրության զարգացմանը։ Սակայն մեծ խնդիր է երեխաների համար մեդիաների անվերահսկելի հասանելիությունը։ Մեդիակրթության առաջին դասերը երեխան ստանում է ընտանիքում, նա հեշտությամբ, երբեմն նույնիսկ անգիտակցաբար, սպունգի նման կլանում է տարաբնույթ և մեծաքանակ տեղեկատվություն։ Ծնողները նախադպրոցական երեխայի և մեդիա աշխարհի միջև

անմիջական և առաջին միջնորդներն են: Ընտանիքում մեդիակրթության գործընթացը տեղի է ունենում բավականին ինքնաբուխ: Ընտանիքի անդամների մեդիա իրավասությունն արտահայտվում է թվային սարքերի արագ զարգացմամբ և ավագ սերնդի կողմից կենցաղային տեղեկատվական աջակցության տարբեր տեսակներով: Գիտնականները կարծում են, որ ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներով նախադպրոցականների չափազանց տարվածությունը հղի է անկանխատեսելի հետևանքներով: Գործնականում նախադպրոցական տարիքից սկսած երեխաներն ազատ և անկաշկանդ դեգերում են մեդիա տիրույթում: ՈՒստի, հաշվի առնելով որոշ երկրների փորձը, որտեղ մեդիակրթությունը վաղուց ի վեր ներառված է ՆՈՒՀ-երի ուսումնական ծրագրում, ՀՀ-ում ևս այն ներթափանցում է նախադպրոցական կրթության համակարգ: Ի.Վ.Չելիշևան գրում է, որ մեդիաները հսկայական դեր են խաղում մեր երեխաների դաստիարակության, կրթության, հոգեկան գործընթացների և ընդհանուր զարգացման գործում: Նա պնդում է, որ ժամանակակից նախադպրոցականները շատ ավելի արագ են, տիրապետում մեդիա նորարարություններին, ունեն զգալի մեդիա փորձ և մշտական մեդիա նախասիրություններ. սիրված մուլտֆիլմեր, համակարգչային խաղեր, հեռուստաշոուներ: Փորձը ցույց է տվել, որ նախադպրոցական կրթության ոլորտում մեդիա կրթությունը գրեթե ուսումնասիրված չէ: Մեդիակրթության հիմնական նպատակը նախադպրոցական տարիքի երեխայի մեդիագրագիտության ձևավորումն է: Նրա մեդիագրագիտությունը ենթադրում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու տարրական գիտելիքներ և պատկերացումներ, հետաքրքրասիրություն, ճանաչողական ակտիվություն, երևակայություն, ստեղծագործական և քննադատական մտածողություն:

Մեդիակրթության նշանակությունն ու դերն այսօր աներևակայելիորեն աճում է, և այն դառնում է որակական նոր հատկանիշներով օժտված անհատականության ձևավորման հիմք: Մեդիակրթությունը տեսողության և լսողության միջոցով սովորելու ավանդական մեթոդի նորարարական դրսևորումն է, քանի որ այս տեխնոլոգիան թույլ է տալիս միաժամանակ օգտագործել տեղեկատվության ներկայացման տարբեր եղանակներ՝ տեքստ, թվեր, գրաֆիկա, անիմացիա, վիդեո և ձայն:

Հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանը, խոսելով ազգային ավանդույթների դաստիարաչական նշանակության մասին, գրում է, որ ուսուցումը և դաստիարակությունը պետք է համապատասխանեն ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հետևաբար ազգային ավանդույթները և արժեքները այն էական գործոններից են, որոնցով պիտի պայմանավորվի նոր սերնդի դաստիարակության գործընթացը նաև մեդիամիջավայրում:

2.2Փորձարարության ընտրանքն ու ընթացքի նկարագրությունը

Փորձարարական աշխատանքները իրականացվել են Լճաշենի <Մանչուկ> մանկապարտեզում:

Մանկապարտեզում տեղադրվել է, հեռուստացույց, համացանցային հասանելիություն: Իսկ հետո սկսվեց ցուցադրություններ կազմելու և խոսքի զարգացման շաբաթվա թեմաներին համապատասխան մուլտֆիլմերի ընտրության աշխատանքները:

Փորձարարական աշխատանքի նպատակն է՝ ծնողներին ծանոթացնել այն ծրագրերին, մուլտֆիլմերին, թեմաներին, որոնց միջոցով երեխաներիը կարող են օգտվել համացանցից:

Փորձարարական աշխատանքներն իրականացման համար ընտրվել են երկու ուղղություն.

1. Մուլտիմեդիա ներկայացումների կիրառմամբ երեխաների ճանաչողական հետաքրքրության, դիտարկման, ուշադրության, խոսքի և մտածողության զարգացում:

Նախադպրոցական տարիքի երեխաները շրջապատող աշխարհի մասին տեղեկատվություն են ստանում տեսողական ընկալման միջոցով, ուստի առարկայական-պատկերավոր մտածողությունը նախադպրոցականների մեդիագրագիտության ձևավորման ամենակարեւոր գործոններից մեկն է:

Ուսումնական մուլտիմեդիա ներկայացումների օգտագործումը թույլ է տալիս.

- բարձրացնել նախադպրոցահասակ երեխայի ոլորտային զարգացման արդյունավետությունը,
- ընձեռում է ինքնակրթության լայն հնարավորություններ,
- նպաստում է ուսուցիչների ստեղծագործական որոնումներին:

2. Երեխաների հոգևոր, բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը մեր հայկական մուլտֆիլմերի դիտման, հեքիաթների ընթերցման և բեմականացմա դրանց հերոսների կերպարների, տարբեր իրավիճակների քննարկման միջոցով:

Այս ամենը նպաստում է հոգևոր և բարոյական զարգացման այնպիսի բաղադրիչների ձևավորմանը, ինչպիսիք են.

-աշխատասիրությունը և տնտեսվարությունը,

- բարու և չարի տարբերակումը,

- փոխօգնության և հարգանքի դրսևորումը

Փորձարարական աշխատանքի ընթացքը.

Ծնողական ժողովը սկսվեց <<Դեմ առ դեմ շրջաններ>> ռազմավարությամբ

1. Ծնողները բաժանվեցին երկու խմբի:
2. Առաջին խումբը շրջան է կազմում և շրջվում են 180*-ով այնպես, որ դեմքով կանգնեն շրջանից դուրս:
3. Երկրորդ խումբը մոտենում է և շրջան է կազմում առաջին խմբի շուրջ: Ծնողները կանգնում են իրար դիմաց:
4. Դաստիարակը հրահանգ է տալիս, որ 2 շրջանները սկսեն պտտվել դեպի աջ (ստացվում է իրար հակառակ ուղղությամբ):
5. Երբ դաստիարակը ասում է "Կանգ առ", ծնողները անմիջապես կանգնում են:

6. Երբ դաստիարակը ասում է "Զույգ կազմիր", ծնողները զույգ են կազմում իրենց դիմաց կանգնած ծնողի հետ և զրուցում են միմյանց հետ դաստիարակի առաջարկած՝ <<Թվային մեդիագրագիտությունը մանկապարտեզում>> թեմայի վերաբերյալ:

   Այնուհետև ծնողներն նստում են իրենց տեղերում և սկսում են քննարկումները՝ խոսում են մեդիագրագիտության դրական և բացասական կողմերի մասին, յուրաքանչյուրը արտահայտում է իր կարծիքը մեդիագրագիտության շուրջ: Այնուհետև դաստիարակը առաջարկում է հեքիաթներ ու խաղեր տանը դիտելու համար:Իսկ այդտեղ ծնողները դաստիարակի հետ միասին դիտում են <<Կախարդական լավաշ>> մուլտֆիլմը, հանձնարարությունը ավելի պատկերավոր դարձնելու համար: Այնուհետև դասիտիարակը առաջարկում է հանդիպել մեկ շաբաթ անց արդյունքները վերլուծելու համար:

2.3 Կարծիք Ծնողներից

Առցանց միջավայրում երեխաների խոցելիության հավանականությունը շատ մեծ է նրանով, որ չերևացող վտանգներ է պարնակում. Այդիսկ պատճառով մենք ծնողներս շատ լուրջ և պատասխանատու աշխատանք պետք է կատարենք մեդիագրագիտության շրջանակներում, քանի որ այսօր մեդիան ներխուժել է մեր կյանքի բոլոր ոլորտներ: ԶՀՄ-ները դեռ վաղ մանկությունից անբաժանելի դեր են խաղում երիտասարդների կյանքում:

Անկարելի է հերքել մեդիայի տեղեկատվական, դաստիարակչական, ուսուցողական դերը երեխայի աշխարհայացքի, բարոյական արժեքների ձևավորման և զարգացման գործում: Անառարկելի է, որ տեղեկատվական ներկայիս ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականի դաստիարակության, մտածողության զարգացման, աշխարհընկալման ձևավորման ամենահզոր միջոցներից մեկը մեդիան է: Այս իմաստով մեդիան նույնիսկ կարող է դառնալ կրթության հուսալի դաշնակից՝ հանդես գալով իբրև արտաքին աշխարհի հետ բացվելու աղբյուր: Ժամանկակակից դպրոցը պետք է այսուհետ սովորեցնի երեխաներին, թե ինչպե՞ս վերահսկել մեդիայի լեզուն և ինչպե՞ս դառնալ մեդիայի ակտիվ ու տեղեկացված օգտագործողներ կրթության ոլորտում: Մեդիան սկսել է մեծ ազդեցություն թողնել երեխաների հայացքների ձևավորման վրա: Այս տեսանկյունից հենց տարրական դպրոցից պետք է սկսել մեդիակրթության կիրառման համար պահպանել համապատասխան մանկավարժական պայմաններ՝ միտված երեխաների առողջության, անվտանգության վարքականոնի ձևավորմանը, նրանց սոցիալականացմանը, թիրախային դարձնելով այս գործընթացում դաստիաարակ-ծնող համագործակցության ստեղծումն ու պահպանումը: Շատ դաստիարակներ օգտագործում են մեդիան՝ իրենց դասերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ուստի կարելի է օգտվել մեդիայի ընձեռած հնարավորություններից՝ պատրաստելու անձնային բարձր որակներով օժտված քաղաքացիներ և հասարակության լիարժեք անդամներ:

2.4 Կարծիք տնօրենից

Ընդհանրապես անվտանգ և ապահով միջավայրը մեծ տեղ և նշանակություն ունի Նախադպրոցական կրթական չափորոշիչներում (ոլորտներից մեկը կոչվում է Ինքնասպասարկում, առողջության պահպանում և անվտանգություն), Ծրագրերում, կան

հրապարակված տարբեր ձեռնարկներ եւ ուղեցույցներ։ Ծրագրերում առանձին տեղ է հատկացված անվտանգ վարքագծի և տարբեր արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի ձևավորմանը։ Անվտանգ վարքագիծը ներառում է երթևեկության կանոններին ծանոթանալը, տարբեր սարքավորումներից օգտվել տեղեկացվածությանը և այլն։ Առցանց միջավայրում երեխաների խոցելիության հավանականությունը շատ մեծ է նրանով, որ չերևացող վտանգներ է պարնակում։ՄԻՊ աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Իվետա Շահբազյանի խոսքով իրենք ստացել են ծնողներից ահազանգեր երեխաների նկարների կամ տեսանյութերի տարածման կամ թվային տիրույթում բլինգի (այս վերջինը դպրոցահասակ երեխաների դեպքմ) դեպքերի վերաբերյալ։ Մասնագետը նշում է, որ դրանք մեծ թիվ չեն կազմում, բայց հիմնական խնդիրը իրազեկված չլինելու մեջ է, որ չգիտեն իրենց կամ երեխաների իրավունքների մասին։ ՄԻՊ գրասենյակը երեխաների իրավնքների հետ կապված մի քանի ձեռնարկներ է հրապարակել, ինչպես լրագրողների համար («Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը, 2018»), այնպես էլ դպրոցի ուսուցիչների համար («Եկեք սովորենք երեխայի իրավնքները»): Նաև թվային անվտանգության Կասպերսկի լաբորատորիայի հետ համատեղ հրապարակել է հայերեն ձեռնարկներ և նյութեր (Կդինով, 2016): Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար ուղեցույցը 2018թ-ին առաջինը հայերեն է թարգմանվել։ Այս ամենով հանդերձ, մասնագետն ընդնում է, որ նաև նախադպրոցական կրթության մեջ առավել ուշադրություն է պետք դարձնել թվային տիրույթում երեխաների իրավունքների պաշտպանությանը, մեդիագրագիտության միջոցով դասավանդողներին ծնողներին առավել իրազեկված դարձնելուն:

Երեխաները ժամանակակից աշխարհում գնալով ավելի ավելի շատ են օգտվում թվային մեդիայից, իջնում է մեդիասպառողների տարիքայի նշեմը, չնայած, որ մասնագետները, բժիշկները չեն խրախուսում էկրանների կիրառությունը շատ վաղ տարիքում՝ մատնանշելով դրա վտանգները՝ խոսքի և զարգացման հապաղում, ֆիզիկական պասիվությն, քնի խանգարում։Միջազգային հետազոտությունները փաստում են, որ տեխնոլոգիան տանը հիմնականում օգտագործվում է երեխային զբաղեցնելու համար՝ պասիվ սպառման միջոցով։ Մյուս կողմից, դպրոց մանկապարտեզ բերելը դրական ազդեցություն է ունենում. Մանկապարտեզում երեխան մենակ չի մնում էկրանի առջև, չիլինում պասիվ սպառող, այստեղ մեդիան կիրառվում է երեխայի զարգացման այս կամ այն խնդիրը լուծելու համար, այդ կիրառությունը լինում է թիրախային, ակտիվ, մեծահասակի մասնակցությամբ ուղղորդմամբ, սովորեցնում է երեխային մեդիահիգիենայի կանոնները, նաև նպատակաուղղված է մեդիայի ասելիքն ազդեցությունը հասկանալուն։

Նախադպրոցական տարիք մեդիագրագիտության մասին խոսելիս մասնագետները մեդիայի շատ լայն ընկալում ե նառաջարկում՝ առաջնություն տալով գրքին, թերթին, թատրոնին, ավանդական լուսանկարներին, ադիոհեքիաթներին երգերին։

Հեքիաթն ու խաղը այս տարիքում կրթության հիմնական մեթոդն են. Ծնողի-մանկավարժի դերը հաճախ միջավայրում իրավիճակ ձևավորելն է, որտեղ երեխաները կզարգացնեն համագործակցային, հաղորդակցական հմտությունները, կստեղծագործեն, կնկարեն,կխոսեն տեղեկությանը հավատալ-չհավատալու մասին, կքննարկեն մեդիագործիքների դերն ու ազդեցությեունը, կկիրառեն դրանք՝ ըստ անհրաժեշտության։ Մեդիակրթության հարուստ ավանդույթ և հաջող փորձ ունեցող երկրներում անգամ նախադպրոցական չափորոշիչներում ծրագրերում տեխնոլոգիայի կիրառության մասին զգուշորեն է խոսվում, միշտ շեշտելով դրա նպատակային թիրախային լինելը, նաև մեծահասակի դերն ու վերահսկողությունը։ Հայաստանում նախադպրոցական գործող չափորոշիչը չի ձևակերպում մեդիա կամ թվային գրագիտության անհրաժեշտությունն ու դրան հասնելու քայլերը, սակայն, ըստ էության, տարբեր բաղադրիչներով նպաստում է կարողությունների ձևավորմանը, որոնք կարող են դառնալ երեխաների մեդիագրագիտության հիմքը։ Տեխնոլոգիա բաժունմ խոսվում է մեդիագործիքների տեխնոլոգիայի մասին պարզ պատկերացում ունենալու մասին, տարբեր տեղերում խոսվում է քննադատական մտքի զարգացման, հարցերտալու, պատմությունը հասկանալու, հաղորդակցական հմտությունները բարելավելու և ստեղծագործելու մասին։ Մեծ է, սակայն, խզումը չափորոշչի և գործող կրթական ծրագրերի միջև, չափորոշչում նախանշված հմտություններն ու արտացոլող ժամանակակից կրթական ծրագրից բացի կա մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցների, ձեռնարկների կարիք։ 2021թ.մարտի10ին հանրային քննարկման դրված չափորոշչում առանձնացված է Մեդիա և թվային կարողունակությունը. Այն բավական խիստ պահանջներ է սահմանմ՝ ակնկալելով, որ նախադպրոցական տարիքի երեխան«պատկերացնում է մեդիայի դերը հասարակական կյանքում, կողմնորոշվում մեդիայի բազմազանության մեջ, ընտրում և գնահատում անհրաժեշտ տեղեկատվությունը…, տիրապետում է մեդիագրագիտության հիմնական կանոններին…, կարողանում է օգտվել տարրական մեդիա գործիքներից»:

Նախագծում ներառված այլ կարողունակություններ, օրինակ՝ մշակութային, հաղոր-դակցական, ճանաչողական, սերտորեն կապված են մեդիագրագիտության հետ և այդ կապերն ընդգծելը նույնպես կարևոր է։ Մեդիագրագիտության արդյնավետ ինտեգրման համար անհրաժեշտ է բարենպաստ միջավայր՝ տեխնոլոգիաների լայն կիրառություն հասարակության մեջ, հանրության, մասնավորապես ծնողների և դաստիարակների մեդիագրագիտության, քննադատական մտածողության համեմատաբար բարձր մակարդակ, պետության կողմից թեմայի կարևորմ, երեխաների տարիքին, զարգացմանը համապատասխան ուսումնական նյութերի առկայություն՝ մեդիագործիքներ, հեքիաթներ,

տեսանյութեր, խաղեր։ Ինտեգրման բաղադրիչներից ամենահեշտը և տեսանելին ՆՈՒՀ-երը թվային տեխնիկայով զինելն է, սակայն դա ոչմիայն քիչ է, այլ կարող է նաև հակառակ ազդեցությունն ունենալ, եթե նախապես մշակված չլինեն ծրագրերն ու չպատրաստվեն ուսուցիչները։ Ինչպես նաև, պետք է ապահովել երեխաների անվտանգությունն իրավնքների պաշտպանությունը՝ տեխնոլոգիաների կիրառման համատեքստում։ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի Թվային միջավայրում երեխայի իրավնքները հարգել, պաշտպանելու և իրացնելու վերաբերյալ ուղեցյուցմ ուղիղ պարտավորթույն է դրվում պետությունների վրա, «որով նրանք պետք է նաև աջակցեն նպաստեն ծնողների, խնամակալների թվային գրագիտությանը պետության կողմից հաստատված ծնողներին հասանելի մեխանիզմների միջոցով՝ որպես երեխաների ընտանիքների համար առավել ապահով կայուն թվային տեխնոլոգիաների միջավայր ստեղծելու միջոց»(ԵԽ,2018,էջ19)։ Հայաստանում մանկավարժները՝ թե դպրոցական, թե առավել ևս նախադպրոցական ոլորտում, չունեն բավարար գիտելիք ու պատկերացում մեդիագրագիտության վերաբերյալ, բացակայում են կրթական նյութերը, ուղեցույցները, ՆՈՒՀ մանկավարժների համար մեդիագրագիտության կամ մեդիակրթությա նհամակարգային վերապատրաստումներ երբևէ չեն եղել։ Մեդիագրագիտության վերապատրաստման կարիք ունեն նաև ծնողները, որոնց դերը վաղ տարիքում երեխայի զարգացման մեջ առաջնային է։ Ծնողն է կարգավորմ երեխայի մեդիասպառումը, ծնողն է երեխայի համար հիմնական օրինակը՝ իր անձնական վարքագծով։ Նրանց նույնպես օգնություն է պետք՝ հասկանալու թվային մեդիայի վտանգներն ու դրական կիրառության կանոնները։ Մանկավարժների, ծնողների, խնամակալների լրացուցիչ կրթության և ռեսուրսների անհրաժեշտության մասին խոսվում է նաև միջազգային տարբեր հետազոտություններում (Herdzina,Lauricella,2020)։ Մեդիագրագիտության տարածումը սովորաբար ենթադրում է տարբեր ոլորտների համատեղ աշխատանք՝ ծնողին, դպրոցին ու մանկապարտեզին զուգահեռ դրանով կարող են զբաղվել մեդիաները, մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցները, դրանք կարգավորող մարմինը և ոլորտի հասարակական կազմակերպությունները, գրադարաններն ու թանգարանները, երեխաների իրավունքներով կրթությամբ զբաղվող այլ կառույցներ։ Այս բոլորի հիմքում պետք է լինի պետական մոտեցում, մեդիագրագիտության զարգացման ազգային հայեցակարգ, որն իր հերթի նպիտի հիմնվի խորքային վերլուծությունների վրա՝ թարմ և համապարփակ տվյալներ հայաստանցի երեխաների մեդիասպառման, ծնողների պատկերացումների նախադպրոցական հաստատությունների տեխնիկական զինվածթյան, մանկավարժական ավանդույթների, դասավանդողների գիտելիքի հմտությունների վերաբերյալ։

Եզրակացություն

Այսպիսով՝ մեր կողմից կատարված տեսական և հետազոտական աշխատանքները վերլուծելով եկանք հետևյալ եզրակացություններին.

- Մանկավարժը թե ծնողը պետք է կարողանա այնպես համակարգել տեղեկատվական հոսքը՝ երեխային դնելով ճիշտ ուղու վրա, ընտրելով այնպիսի հաղորդումներ, մուլտեր որոնք կնպաստեն սաների ճիշտ դաստիարակությանը:
- Երեխաները պետք է կարողանան դասակարգել մեդիա դաշտում շրջանառվող իրենց տարիքին համապատասխանող մեդիաբովանդակությունը /հայկական մուլտֆիլմեր, առդիո հեքիաթներ, սոցիալական գովազդներ,ազգագրական երգ և պար, հայկական բնաշխարհի պատկերներ, հայկական պետական խորհրդանիշեր և այլն/:
- Առցանց միջավայրում երեխաների խոցելիության հավանականությունը շատ մեծ է նրանով, որ չերևացող վտանգներ է պարնակում. Այդիսկ պատճառով թե՛ մանկավարժը, թե՛ ծնողը պետք է կարողանա ուղղորդել երեխային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Մ. Դալլաքյան, Ս. Ա. Մարության «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, «Գասպրինտ», Երևան 2008թ.
2. ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, ղեկավար – հ.գ.թ., դոցենտ Վարդանյան Կ. Ե.
3. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020թ
4. Մեդիակրթությունը տարրական դպրոցում Եգանյան Գ. ՀՊՄՀ, Հայաստան:
5. ՄԵԴԻԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: Ձեռնարկ մեդիագրագիտություն դասավանդողների համար.- Երևան: Մեդիանախաձեռնությունների կենտրոն, 2022
6. Նախաշավիղ 1.2012
7. Նախաշավիղ 5.2009